

կալութիւնը: Այս բոլոր սխալ պատճառանքները դրամով զօրացած՝ կը բանան մասմեաականներուն աչքերը, և հակառակ լաւագոյն յանձնարարութեան, քարոզիչները կը ստիպուին հեռանալ... Ո՛րչափ ցաւալի է որ հայերն իրենց աչքերը չեն բանար, վասն զի այլուս անոնք լաւ, նաւորութեան տէր են ու բարեպաշտութեան հակում ունին» (15):

Նկատի առնելով կաթողիկէներուն և եւրոպացի քարոզիչներուն կրած հալածանքները, Ս. Քահանայապետները՝ քրիստոնեայ թագաւորներու միջոցաւ կամ ուղղակի, կը դիմեն պարսիկ Շահերուն, որպէս զի պաշտպան կանգնին հալածեալներուն. և Շահերը ընթացք կու տան կատարուած դիմումներուն (16):

Եթէ հայ կղերը, մեծ մասամբ, բուն կերպով կը պայքարի ընդդէմ կաթողիկէ քարոզիչներու և հաւատացեալներու, սակայն պատկտուած կը մնայ նաև ինքն իր մէջ, փառասիրութեամբ և շահասիրութեամբ: Հայ եկեղեցականները սանձարձակօրէն խօլ արշաւանք մը կը կատարեն ի խնդիր նուիրապետական աթոռներու,

(15) G. A. Ezov, Snachenia Piotra Velikavo se Armenianskim Narodom, Dacoumenti. St. Pétersbourg, 1898 p. XVI.

(16) A Chronicle of the Carmelites in Persia... Tom. II, p. 1303, 1305,